10904

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«26» 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0107-22

Ձեռնարկողը՝ ***«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ***
Երևան, Կիևյան 16

Գործունեությունը՝ ***Աշտարակ համայնքի Կարբի և Նոր Երզնկա ՄԽ1 բաժանարարի վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0107-22

<26> 07 2022թ.

Աշտարակ համայնքի Կարբի և Նոր Երզնկա ՄԽ1 բաժանարարի վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Կարբի, Նոր Երզնկա բնակավայրեր

Ներածական մաս. Գործունեության նպատակն է իրականացնել Աշտարակ համայնքի Կարբի և Նոր Երզնկա բնակավայրերով անցնող ՄԽ-1 բաժանարարի ծրագծի վերականգնման աշխատանքներ: «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» նպատակն է Հայաստանի ոռոգման ենթակառուցվածքների արդիականացումն ու արդյունավետության բարձրացումը: Ջրանցքի ուղեգիծը գտնվում է Արագածոտնի մարզի Կարբի և Նոր Երզնկա բնակավայրերում:

Բոլոր աշխատանքներն իրականացվելու են բնակավայրերի բնակելի տարածքներից դուրս:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 3)-րդ կետի «բ.» ենթակետի:

Նկարագրական մաս. Ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում, նախատեսվում է վերականգնել ՄԽ-1 բաժանարարի ծրագիծը: ՄԽ-1 բաժանարարը ջուրն ստանում է Քասախի ոռոգման համակարգի ձախ ճյուղից: Բաժանարարի իշխման տակ Կարբի և Նոր Երզնկա համայնքների 900հա ոռոգվող հողերն են, այդ թվում՝ 600հա փաստացի ոռոգվող հողատարածքներ: Նախատեսվում է վերականգնել ջրանցքի սկզբնամասի ջրընդունիչ և «Յարցև» տիպի ջրաչափից հետո բաց սեղանաձև կտրվածքով բետոնային հատվածը, որի պատերը հետագայում երեսապատվել են երկաթբետոնյա սալիկներով: Ջրանցքի բետոնը լրիվ քայքայված է, մաշված, կոտրված, նստվածքներով և տակը դատարկություններով: Երկաթբետոնյա սալերը տեղաշարժված են, մոնոլիտ բետոնից հատվածները նույնպես քայքայված են: Ջրանցքի հաշվարկային ծախսը 700լ/վրկ է, միջին չափսերն են՝ b=0.5-0.6մ, h=0.5-0.7մ:

Ջրանցքի սկզբնական (մոտ 550մ) հատվածն անցնում է մեծ թեքությամբ (≈0.13) իրավիճակով, դրանից հետո թեքությունները համեմատաբար փոքրանալով հասնում է մինչև

0.05-ի: Հաշվի առնելով տեղանքի նման մեծ թեքությունները, որոշվել է գոյություն ունեցող ջրանցքը թողնել նույն վիճակում, իսկ նոր ջրագիծը կառուցել պոլիէթիլենե խողովակներով՝ (500 և 450մմ-անոց) տեղադրելով այն առկա ջրանցքից դեպի ձախ 2÷2.5մ հեռավորությամբ՝ ստորգետնյա դիրքով, ջրանցքի շահագործման ճանապարհի հատվածում:

Նոր ջրատարը նախատեսվում է կառուցել 3830մ երկարությամբ: Նկատի ունենալով տեղանքի այս հատվածի մոտ 280մ նիշերի տարբերությունը՝ ջրատարի վրա 4 կետում տեղադրվելու են մարիչ հորեր:

Քասախի ջրանցքից սկսվող գլխամասից ջրանցքով դեպի ներքև մոտ 30մ հեռավորությամբ կառուցվելու է մի նոր ջրընդունիչ, որն ունենալու է մոտ 30մ երկարություն և տեղադրվելու է 325մմ-անոց մետաղական խողովակաշար:

Հիմնական գլխամասի մուտքամասում նախատեսվում է տեղադրել ГС80-230 չափի փական և աղբորսիչ ցանց: Շարունակությամբ տեղադրվելու է 800մմ-անոց և 700մմ-անոց ու 7մ երկարությամբ խողովակներ: 700մմ-անոցը փոխարինվում է նույն երկարությամբ 800մմ-անոց և 7մ երկարությամբ խողովակով: Շարունակությամբ կա «Յարցև» տիպի ջրաչափ՝ բարվոք վիճակում: Նախատեսվում է ջրաչափից հետո կառուցել ջրընդունիչ հոր, որից սկիզբ է առնում նախատեսվող խողովակաշարը, մեկ ջրթող դեպի ձախ ուղղությամբ, և 500մմ-անոց մետաղական խողովակաշար՝ դեպի առկա ջրանքը: Ջրատարի վրա նախատեսվում է տեղադրել 6-ական ջրթող՝ աջակողմյան և ձախակողմյան:

Շինմոնտաժային աշխատանքների շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ոռոգման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացվելու է լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:
- հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար նախատեսվում է օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:

Բուսահողը բացակայում է:

Հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն երկրաբանական կտրվածքների: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են: Դրանք իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ, ոչ պիտանի հանույթն ու հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակի ապահովված կլինի

համապատասխան աղբամաններով:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է օգտագործել բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, եռակցման էլեկտրոդներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ փոշենստեցման և աշխատողների կենցաղային կարիքների համար:

Տեխնիկական ջուրը մատակարարվելու է մոտակա ոռոգման ցանցից, ջրատար մեքենաներով, Երևանի քաղաքապետարանի հետ պայմանագրի հիման վրա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Իրականացնել կանոնավոր ջրցան շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:

-Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ՝ երթևեկությունից առաջացող արտանետումները կրճատելու համար:

-Խուսափել մեքենաներն ու սարքավորումները զգայուն ազդակիրների հարևանությամբ կայանելուց, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, հասարակական շենքերը և այլն:

-Աղմուկ առաջացնող աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ 14:00- 18:00:

-Տեղադրել ցուցանակներ/ ցուցապաստառներ,

-Հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց խրամուղիների առկայությունը:

-Շինհրապարակում ունենալ կեղտաջրերի հեռացման տարա (≥3 մ3) և հնարավոր կեղտաջրերը/բետոնաջրերը հեռացնել նախատեսված տարայում:

-Նախքան շինհրապարակից դուրս գալն անհրաժեշտ է իրականացնել անվադողերի մաքրում:

-Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինհրապարակից դուրս:

Ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքներում /ազդեցության գոտում/ բացակայում են բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև պատմամշակութային արժեքները: Անմիջապես ջրանցքի վերակառուցման աշխատանքների տեղանքում չկա բնական բուսածածկ և չկան վայրի կենդանիներ:

Ամբողջ ծրագրի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի գումարային գնահատումը մոտ 10 մլն. ՀՀ դրամ է:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Աշտարակ համայնքի Կարբի և Նոր Երզնկա ՄԽ-1 բաժանարարի վերականգնման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների

իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ:
- Անհրաժեշտ է երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:
- Շինարարական աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայգյուղշիննախագիծ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Աշտարակ համայնքի Կարբի և Նոր Երզնկա ՄԽ-1 բաժանարարի վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Գոհար Մինասյան